

8457

Ս. ԶԵԼԻՆՍԿԻ

Գ Ե Տ Ն Ա Ն Ո Ւ Շ



Երկրորդ տպագրութիւն, փոփոխուած և
լրացրած:

Ակարաներով:

105

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ջրագատիպ Մն. Մարտիրոսեանցի,
Միքայէլեան փողոց № 81

1899

6352

2-51

635
2-51

պ

Ս. ԶԵԼԻՆՍԿԻ

Գ Ե Տ Ն Ա Ն Ո Ի Շ



Երկրորդ ապագրութիւն, փոփոխուած և
լրացրած:

Ախարներով:



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի,
Միքայէլեան փողոց, № 81.
1899

2012

39
WZ

47004132 .0

Տ Գ Ո Մ Բ Օ Զ Գ Ք

113627-ԱԸ

Дозволено Цензурою, Тифлисъ, 15-го Февраля 1899 года.

359
43



որոց չ' արիցի գոմարս դաւանանով
այս արիւնք Գգմնկրտ ճաւան կիկի պոց

I.

Վերջի երկու-երեք տարիներում Ան-
գրկովկասում երևան է եկել մի նոր մշա-
կելի բոյս, որին զանազան լեզուներով
զանազան երկրներում այլ և այլ անուն-
ներ են տալիս՝ գետնանուշ, գետնա-
ընկոյզ, գետնապիտակ, գետնասի-
սեռն: Նրա գիտնական անունն է *Arachis*
hipogaeae L. Թիֆլիսի շուկայում և այլ
տեղերում այս բոյսի պտուղը յայտնի է
չինական ընկոյզ (китайский орехъ)
անունով: Այս բոյսը, որի հայրենիքը հա-
մարում է Բրազիլիայ երկիրը, «գետնի»
անունն է կրում այն պատճառով, որ նրա
սերմնարանը բեղմնաւորուելուց յետոյ՝
ծառում է դէպի հողը, մտնում է նրա մէջ
և այնտեղ կազմակերպւում է և զարգա-
նում է պտուղը:

Գետնանուշը տարևոր թփիկ է, ընդա-
րեր, թիթեռնածաղիկների ցեղից: Նրա
ճիւղերը կամ ցողունները փշոտ են և
ծածկուած են թեթև խառով: Բուն ցո-
ղունը ուղղահայեաց է, իսկ կողքերի ցո-
ղունները քիչ թերուած են լինում դէպի



գետինը: Գետնանշի տերևները, ինչպէս ե-
րեւում է այստեղ բերուած նկարից, բաղա-
դրեալ կամ բարդ կազմակերպութիւն ու-

նին չորեքբլթեան են, գոյնը փայլուն կա-
նաչ է, բաւականին հաւալիկ կոթերով:
Նրա ծաղիկները մանր են, դեղին գոյնով,
շաար ջլստակ: Ծաղիկների կոթերը դա-
նազան երկարութեան են լինում, նայած
որտեղ է գոյացել այս կամ այն ծաղիկը՝
եթէ ծաղիկը գոյանում է գետնից բարձր
ճիւղի վրայ, այն ժամանակ նրա կոթը
երկարանում է, որ սերմնարանը կարողա-
նայ հասնել հողին և մտնել նրա մէջ, իսկ
ճիւղերի ներքևի մասի ծաղիկները ունե-
նում են գետնի մօտիկութեան պատճառով՝
աւելի կարճ կոթեր:

Գետնանշի պտուղը արտաքին տեսքով
նման է ճարտնական տեսակի շերամի կո-
կոնին (տ. կազմի վրայի նկարը), բայց մե-
ծութեամբ նրանից մի քիչ փոքր է: Նրա
կճեպը բաց-յարգագոյն է, ցանցանման է
կամ սարդի ոստայնի կազմուածքով: Պը-
տուղի մէջը լինում է երկու կամ երեք
հատ արբայակաղնու (թխիլի) պտուղի մե-

ծութեան հունդ, նուրբ ու շագանակազոյն թաղանթով ծածկուած: Հունդի նիւթը սպիտակ է:

II.

Գետնանշի հունդը հում լորու համ ունի, բայց նրա քիչ բովածը շատ համով է: Գործ է ածուում գետնանշի հունդը զանազան տեսակ: Սպանիայում գործ են ածում եփած, ինչպէս սիսեռն կամ լորին, ուրիշ տեղերում իւրը հանելուց յետոյ նրա քուսքը շորացնում են, աղում են և, խառնելով ցորենի ալրի հետ, հաց են թրխում, որ շատ մնդարար է, բայց աւելի գործածական է գետնանշի բովածը, որ ուտում են ինչպէս մրգեղէն:

Գետնանշի հունդից ստացւում է ամենաընտիր իւղ, որ թափանցիկ է, դիմացկուն, քաղցր է, քիչ նշի հոտ ունի, ցուրտ

ժամանակում թանձրանում է, ինչպէս ձիթենու իւղը:

Գետնանշից՝ մամուլի առաջի և երկրորդ ճնշումից դուրս է գալի մաքուր իւղ բացդեղին գոյնով և արուեստական կերպով մաքրել չէ պահանջում. իսկ երբ քուսքը (կոպտոնը) երրորդ անգամ ճնշում են մամուլով, այն ժամանակ ստացւում է իւղի աւելի անմաքուրը: Գետնանշի հունդից ստացւում է 40—48 տոկոս իւղ, այսինքն 100 փութ սերմից դուրս է գալի 40—48 փութ իւղ, որից 30—35 փութը լինում է մաքուր, իսկ մնացածը անմաքուր: Գետնանշի իւղի մաքուրը, որ իւր յատկութիւններով դժուար է ջոկել ձիթենու իւղից, գործ է ածուում ուտելու համար, իսկ նրա անմաքուր տեսակից պատրաստում են սպիտակ, անհոտ սապոն, կամ գործ են ածում մեքենաների մասերը օծելու համար:

Գետնանշից ստացւած քուսքը գործ է ածուում իրրև կերակուր, որ շատ սննդա-

բար է: Ափրիկէյի և Ամերիկայի բնիկ ժողովուրդը այս հունդի քուսքը ուտում է հում կամ բոված, կամ թէ պատրաստում է նրանից դանազան կերակրներ: Ալիւր դարձրած քուսքը, ինչպէս յիշեցինք վերևում, խառնում են ցորենի ալլրի հետ և թխում են նրանից հաց, բայց աւելի համով է լինում հացը, երբ ցորենի ալլրի հետ խառնում են մի քիչ այս բոյսի հունդի ալլուրը: Քուսքի ալլուրը նոյնպէս կեփում են կաթի հետ և ստացւում է կահաօյի կամ շօկոլաթի նման շատ համով և սննդաբար ըմպելիք: Վերջապէս գետնանշի աւելի ցածր տեսակ քուսքը համարում է ամենաընտիր և սննդաբար ճարակ ընտանի անասունների համար, մանաւանդ կաթնատու կովերի համար, որոնց կաթը այս ճարակի ազդեցութիւնից մէկին երկու աւելանում է: Վերոյիշեալ տեղեկութիւններից երևում է որ գետնանուշը շատ ընտիր յատ-

կութիւններ ունի և զարմանալի չէ ուրեմն, որ այս բոյսը շատ շուտ հետաքրքրեց գիւղատնտեսներին և տարածուեց գոմանան երկրներում մեծ ծաւալով: Այս բոյսը շատ մեծ քանակութեամբ մշակում են Հիւսիսային Ամերիկայում, Ափրիկէի երկրներում, Հնդկաստանում, Սպանիայում, Իտալիայում, Փրանսիայում և Եւրոպայի ուրիշ երկրներում: Հիւսիսային Ամերիկայում համարեա ամեն մի փոքր խանութում կը գտնէք այս հունդը, իսկ այնտեղի մեծ քաղաքներում ամեն մի փողոցի անկիւնում կտեսնէք նեղրներին իւրեանց մանդալներով կամ փոքրիկ շարժական հնոցներով, որոնց վրայ բովում են և վաճառում են այս անուշ հունդը: Նոյնը կը տեսնէք և Փրանսիայում, իսկ վերջի տարիներում սկսեցին բերել այս հունդը նաև Թիֆլիս, որտեղ նրա բովածը թաբաղների մէջ ման են ածում փողոցներում և վաճառում են՝ ֆունտը 20—25 կոպէկով:

III.

Գեորգիանցի մշակելու փորձը Անդրկովկասում առաջին անգամ արաւ Կովկասի Գիւղատնտեսական Ընկերութիւնը վաթսունական թուականներին, բայց անյայտ պատճառով այս գործը այն ժամանակ առաջ չգնաց: Այժմ գետնանուշը մշակում է մեր երկրի մի քանի տեղերում՝ Ղարաբաղի, Քուժայիսի և Գեօկչայի արքունական փորձնական և ցուցական հանդերում, Բաթումի մօտ, Չակվայ անունով Կայսերական կալուածում ու Սուխումի գաւառում, նոյնպէս և Թուրքեստանում (Տաշքենտ քաղաքի մօտ): Գեորգիանուշը վերջի ժամանակ սկսել են մշակել նաև առանձին գիւղատնտեսներ Երևանի և Գանձակի նահանգներում:

Գեորգիանուշը մշակում է առհասարակ տաք տեղերում, ուր 5—6 ամիս առում է

տաք ժամանակը, որ կարեւոր է նրա հասունանալուն: Չոր տեղերում նա մշակում է ջրարբի հողի վրայ, բայց ինչպէս ցոյց տուեց փորձը, Ղարաբաղի արքունական հանդում այս բոյսը 1897 թուին մշակուած էր և քարքարոտ անջրդի տեղում և, չնայած այս հանգամանքին, նա բաւականին առատ պտուղ տուեց: Աչքի առաջ ունենալով այս փորձը՝ կարելի է յուսալ, որ այս օգտակար բոյսը հնարաւոր լինի մշակել նաև այն տեղերում, ուր ջրարբի հող չկայ կամ ոռոգելու ջուրը սակաւ է:

Գեորգիանուշը պէտք է ցանել զարնանը, երբ հողը բաւականին տաքանում է և տաք գիշերներ են լինում, որպէսզի նրա սերմը կարողանայ ծլիլ և բուսնիլ, իսկ հակառակ դէպքում նա կարող է շուտ չը ծլիլ և հողի մէջ մնալով փախիլ: Մօտաւորապէս ցանքը կարելի է անել, նայած տեղի կլիմայի պայմաններին, ապրիլի

15—20-ից սկսած մինչև մայիսի մէկը: Տողը գետնանշի մշակելու համար առաջի անգամ պէտք է հերկել շահանք և երկրորդ անգամ գարնանը ցանելուց առաջ: Յետոյ հարկաւոր է փոցխով կամ մանկեռով հողը փխրացնել, մաքրել ամեն տեսակ խոտերի արմատներէից և անոյ տալ, եթէ հողը պարարտ չէ և պահանջում է արուեստական կերպով պարարտացնելու միջոց: Այս բոյսը սիրում է փուխը հող և վերջինի փխրութեան համար լաւ է նրա հետ խառնել մանր աւաղ: Հողը պարաստելուց յետոյ պէտք է առուներ շինել, ինչպէս այդ անում են լորբիի համար, և սերմը ցանել առուների հողակոյտների մէջ: Առուների լայնութիւնը պէտք է լինի $3\frac{1}{4}$ —1 արշինից ոչ աւելի: Քաղհանը հեշտացնելու համար և պողատութիւնը աւելացնելու համար գետնանշի սերմը հարկաւոր է ցանել շաքրով՝ 8—10 վերջոկ հեռաւորութեամբ միմեանցից: Ա-

մեն մի տեղում հարկաւոր է անկել մի հատիկ պտուղ կամ, աւելի լաւ է, մի հատիկ կճեպի միջից հանած սերմ և ծածկել նրան 1—1½ վերջոկ հողով: Մի գետնատին (10 փութ ցորենի սերմ տանող տեղում) տարածութեան համար բաւական կլինի 2—3 փութ գետնանշի սերմ: Յանելուց յետոյ, եթէ հողը թաց չէ, պէտք է ջրել, ջուրը բաց թողնելով առուների մէջ, որտեղից ջուրը կ'ծծուի առուների հողակոյտների մէջ և այդպիսով հողը, որի մէջ ցանուած է գետնանուշը, կ'իսնասանայ: Ջրել հարկաւոր է ամեն անգամ, երբ բոյսը պահանջում է, բայց պէտք է նկատել, որ այս բոյսը, ինչպէս երևում է զանազան տեղ եղած փորձերից, բանջարանոցի բոյսերի նման շատ ջուր չի սիրում, որովհետև շատ ջրելուց նրա թուփը լորբիի նման թէև մեծանում է, փարթամանում է, բայց շատ ծաղիկ չի ստալի, ուրեմն այս դէպքում առատ պտուղ էլ չէ կարող տալ:

Գետնանշի կանաչելուց յետոյ ամեն կերպով պէտք է աշխատել նրա թփերի չորս կողմի հողը փուխը պահել: Վերևում ասացինք, որ այս բոյսի սերմնարանը ծաղիկը թափելուց յետոյ՝ մտնում է հողի մէջ և այնտեղ պտուղը կազմակերպւում է և մեծանում, ուրեմն հասկանալի է, որ եթէ թփի շուրջը փուխը հող չլինի, այն ժամանակ պտուղը չի կարող մտնել հողի մէջ և չմեծացած կփչանայ: Ի նկատի ունենալով այս հանգամանքը, բացի քաղհանից, որ անպայման հարկաւոր է հողի պարարտութիւնը պահպանելու համար, պէտք է թփերի շուրջը եղած հողը փխրացնել և կիտել նրանց տակը (բողազ անել): Այս գործողութիւնը պէտք է կատարել ամառուայ ընթացքում մի քանի անգամ, մանաւանդ ջրելուց յետոյ, երբ թփի չորս կողմի հողը փլում է և պտուղները հողի տակից բացւում են: Առհասարակ բողազ անել հարկաւոր է

ամեն անգամ, երբ նկատուում են նոր ծաղիկներ և երբ անձրևից, ջրելուց և ուրիշ պատահական դէպքերից թփերի շուրջը եղած ամրացած հողը արգելք դառնում բոյսի սերմնարանների հողի մէջ մտնելուն:

Գետնանուշը հաւաքում են աշնանը և քանի ուշ հաւաքել, այնքան աւելի պտուղ կլինի, որովհետև հողի մէջ ուշ մըտած պտուղները կարողանում են հասունանալ: Հաւաքում են գետնանուշը հետեալ ձևով՝ թուփը գետնից հանում են ձեռքով կամ բահով, քցում են նրան արեգակի առաջ և երբ պտուղներին կպած հողը չորանում է, թափ են տալի, որ հողը վայր թափուի, և սկսում են ձեռքով պոկել պտուղները: Փտած և տհաս պտուղները պէտք է ջոկել և մնացածը լուանալ սառը ջրի մէջ, և յետոյ լաւ չորացնել արեգակի առաջ: Կրկնում ենք, որ փտած պտուղները պէտք է հեռացնել

որովհետև նրանք կարող են պատճառ
լինել առողջ պտուղների փտելուն:
Ջանքով մշակուած գետնանուշը շատ
պտղատու է լինում: Մի դետեալին տա-
րածութիւն ունեցող տեղից, նայած հողի
պարարտութեանը և տեղի կլիմայի պայ-
մաններին, ստացւում է 100—150 փութ
գետնանշի պտուղ: Բացի սրանից՝ գետ-
նանշի թփից գոյանում է բաւական քա-
նակութեան տաւարի ճարակ, որ շատ
սննդարար է ընտանի անասունների հա-
մար ուսման խոտակեր կենդանի շատ
ախորժակով ստում է: Ուշադրութեան
արժանի է նաև այն, որ գետնանուշը թէև
իւղատու բոյսերից է, բայց սովորաբար
(գենադերձագի), կտուսահատի, սորեկի և
այլ իւղատու բոյսերի նման հողը ուժա-
թափ է անում, այլ ընդհակառակը՝
նա իբրև ընդարեր բոյս (606000), պարար-
ցնում է հողը, ինչպէս օրինակ առուոյտը,
կռիկական և այլ գրանց նման բոյսերը:

150

16

900


150

900

1600

Գետնանշի վերարբերել այս մեր տուած
տեղեկութիւններից ակնյայտնի երևում է,
որ յիշեալ հունգը շատ օգտակար մշակելի
բոյսերից է, հետևաբար կցանկայինք, որ
մեր գիւղացիները և գիւղատնտեսները
սկսէին նոյն իսկ այժմից մշակել այս ըն-
տիր պտուղը, որ իւր յատկութիւններով
կերակրի ընտիր նիւթ է, անուշ մրգեղէն
է և կարող է ժամանակով առատ եկա-
մտի աղբիւր դառնալ:

Գետնանշի սերմը կարելի է գտնել
Թիֆլիսի խանութներում և ստանալ թէ
Կովկասեան Կայսերական Գիւղատնտե-
սական Ընկերութիւնից և թէ Ղարաբաղի
Արքունական հանգի կառավարիչ պ. Նի-
կոլայ Տարատինովից, որի հասցէն Թիֆ-
լիս է:

359
48

8457

արևմտեան ժողովրդի տարածումը
և նրանց մտայնական կյանքի մասին
խիստ քաղաքացիական, սակայն չափազանց
լուրջ և ծանրաբանությամբ վերաբերվող
նրա հետազոտությունը և զբաղմունքները
-նրա ինքնուրույն պիկտուրալ կյանքի մասին
կարգաւորական և ինքնուրույն հետազոտական
կարգաւորական գործունեության և նրա
-նրա հետազոտական գործունեության և նրա

կյանքի մասին խիստ քաղաքացիական
և ծանրաբանությամբ վերաբերվող
նրա հետազոտությունը և զբաղմունքները
-նրա ինքնուրույն պիկտուրալ կյանքի մասին
կարգաւորական և ինքնուրույն հետազոտական
կարգաւորական գործունեության և նրա
-նրա հետազոտական գործունեության և նրա

2013

Հայաստանի Ազգային գրադարան



NL0435490

E 105